Պրենատալ խնամք

Մնացեք առողջ հղիության ընթացքում

Դիմեք պրենատալ խնամքի՝ անմիջապես հղիության մասին իմանալուց հետո

Ի՞նչ է պրենատալ խնամքը

Դա այն առողջապահական ծառայությունների ամբողջությունն է, որոնք դուք ստանում եք հղիության ընթացքում:

Ովքե՞ր են մատուցում պրենատալ խնամք

- Բժիշկ-գինեկոլոգը կամ ընտանեկան բժիշկը, որը հատուկ ուսուցում է անցել
- Մանկաբարձ բուժքույր
- Բուժքույր պրակտիկանտ
- Խնամող (դուլա)՝ համայնքային հատուկ օգնական, որն օգնում է ձեզ թե հղիության ընթացքում և թե դրանից հետո

Ինչո՞ւ է ինձ անհրաժեշտ պրենատալ խնամք

Այն օգնում է ապահովել հղիության առողջ ընթացք և առողջ երեխա ծննդաբերել: Վաղ և կանոնավոր պրենատալ խնամքը
կարևոր է: Պրենատալ խնամքը թույլ է տալիս բացահայտել խնդիրները հղիության վաղ շրջանում: Այն կարող է օգնել վաղ ծննդաբերությունը (նախքան ակնկալվող օրը) կամ թերքաշ երեխայի (խիստ փոքր պտղի) ծնունդը:

Հետևեք ձեր պրենատալ խնամք մատուցողի հետ հանդիպումների գրաֆիկը

Եռամսյակ	Շաբաթներ	Նշանակումներ
1ST	1 – 12 շաբաթներ	• Այցելեք ձեր խնամք մատուցողին անմիջապես՝ հղիության կասկածի դեպքում, իսկ այնուհետև՝ ամեն չորս շաբաթը մեկ անգամ:
2ND	12 – 28 շաբաթներ	• Այցելեք ձեր խնամք մատուցողին ամեն չորս շաբաթը մեկ անգամ:
3RD	28 շաբաթ՝ ծննդաբերություն	• 28-36 շաբաթների ընթացքում այցելեք ձեր խնամք մատուցողին՝ ամեն երկու կամ երեք շաբաթը մեկ անգամ: • 36 շաբաթից սկսած՝ ընդհուպ մինչև ծննդաբերությունը, այցելեք ձեր խնամք մատուցողին՝ ամեն շաբաթ:
ՀԵՏԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ	Ծննդաբերությունից հետո	• Այցելեք ձեր խնամք մատուցողին ծննդաբերությանը հաջորդող 1 – 12 շաբաթների ընթացքում Այցի մասին պայմանավորվածությունը ձեռք բերեք անմիջապես երեխայի ծնվելուց հետո:

Հղիության ընթացքում այցերի գրաֆիկը պահպանելն օգնում է առողջ երեխա ծննդաբերել:
Ձեր խնամք մատուցողը կհամոզվի, որ դուք ստանում եք ձեզ անհրաժեշտ խնամքը:

Հարցերի դեպքում

Զանգահարեք մեր շուրջօրյա բուժքույրական խորհրդատվական գծով Մենք միշտ պատրաստ ենք աջակցել ձեզ

Անգլերեն՝ **(888) 275-8750**
Իսպաներեն՝ **(866) 648-3537**
TTY/TDD. **711**

Տրամադրված՝ Molina Healthcare-ի կողմից: Այս թերթիկում ներկայացվածը բացառապես տեղեկատվական բնույթ է կրում: Այս տեղեկությունները չեն փոխարինում ձեր խնամք մատուցողի խորհուրդները
Այս տեղեկատվությունն այլ լեզուներով և մատչելի ձևաչափերով ստանալու համար խնդրում ենք զանգահարել անդամների սպասարկման ծառայություն:
Այս համարը հասանելի է ձեր Անդամակցության քարտի հակառակ կողմում

MolinaHealthcare.com
33662FLYMDCAhy-AM | 250423

MOLINA HEALTHCARE